հելմ II կայսրը: Առանձնապէս մեծ շքով ընդունեց Վատիկանը Վիլհելմ II-ին: Հռոմի հոգեւորականութեան խօսքերին նայելով Վիլհելմ II այցելել է Վատիկանը ո՛չ իբրեւ բողոքական միապետ, այլ որպէս կաթոլիկ կայսր: Լրագրներին նայելով, պապը նրան ընդունելուց և մօտ 20 րոպէ առանձին իրար հետ խօսակցելուց յետոյ, ուղեկցել է կայսեր մինչև ընդունելութեան դահլիճի դուռը: Գերմանական կայսեր այցելութիւնը մեծ ուրախութիւն է պատճառել կաթոլիկ աշխարհին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Գերմանիայում կրկին յուզուել և հետզհետէ աւելի լայն ծաւալ ստանալ է սկսում այն հարցը, թէ հարկաւոր է աստուածաբանական գիտութեամբ զբաղուող ուսուցչապետների առաջ որոշ պարտաւորութիւններ դնել և նրանց ազատութեան չափը սահմանափակել: Ազատամիտ ուղղութեան ներկայացուցիչները, ուսուցչապետ Շմօլլէրի նախագահութեամբ մասնաւոր նիստ գումարելով, վճիռ կայացրին, որ գիտութիւնը կարող է ազատ ճանապարհով միայն անսայթաք առաջ գնալ: Խնդիրը, երկար ժամանակ յեղյեղուելուց յետոյ, դարձաւ պրուսական պալատի խորհրդածութեան առարկայ: Պալատը, քննելով խնդիրը բազմակողմանի կերպով, անհրաժեշտ համարեց գիտութեան ազատութիւնը, որ անխախտ պէտք է մնայ. իսկ ուսուցչապետների ուսումնականութիւնը կարող է ամենամեծ և վստահելի երաշխիքը լինել, որ նրանք զերծ կմնան զանազան երկուութիւններից և իրենց եզրակացութիւններով գայթակղութիւն չեն պատճառի:

— Հեսսէնում ներկայումս ժողովրդի որոշ դասակարգի կողմից պահանջ է դրուել բոլորովին առանձնացնել, բաժանել ժողովրդական դպրոցները եկեղեցուց և պաստօրների մասնակցութիւնը միանգամայն ժխտել: Կառավարութիւնը սակայն այդ պահանջի դէմն առաւ, բացատրելով, որ սկզբնական կրթութեան ժամանակ անհրաժեշտ հարկաւոր է կրօնական դաստիարակութիւն և թէ պաստօրների մասնակցութիւնը ժողովրդական դպրոցների կառավարութեան մէջ անխուսափելի է նրանով, որ նրանք ամենակարևոր անձնաւորութիւններն են այդ տեսակ դպրոցների գոյութեան և պահպանութեան համար: